

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՄԱՍԻՆ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

**ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2010թ. հունվար-նոյեմբեր ամիսներին գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 596.7 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 85.5 %-ն է: Բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է 385.8 մլրդ դրամ (նախորդ տարվա 79.5%-ը), իսկ անասնապահությանը՝ 210.9 մլրդ դրամ (նախորդ տարվա 99.0 %-ը): Այսինքն գյուղատնտեսությունում 2010թ. առաջին 11 ամիսների տվյալներով (հունվար-նոյեմբերին) գրանցվել է տնտեսական անկում, որը կազմում է 14.5 %, այդ թվում բուսաբուծությունում՝ 20.5 %, իսկ անասնապահությունում՝ 1.0 %:

2. Բուսաբուծությունում համախառն արտադրանքի կրճատումը պայամանավորված է գրեթե բոլոր հիմնական մշակաբույսերի, բացի խաղողից, արտադրության ծավալների կրճատմամբ: Այսպես, կարտոֆիլի արտադրությունը կազմել է 490.3 հազ. տոննա, որը նախորդ տարվա համեմատ պակաս է 82.7%-ով, համապատասխանաբար բանջարեղենի՝ 693.2 հազ. տոննա (85.6%), պտղի՝ 125.6 հազ. տոննա (38.0%) և հացահատիկի՝ 323.6 հազ. տոննա (87.0%): Խաղողի արտադրությունը կազմել է 218.6 հազ. տոննա, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 5.4 %-ով:

3. Անասնապահությունում համախառն արտադրանքի որոշակի կրճատումը պայամանավորված է մսի (4.2 %-ով) և կաթի արտադրության (3.6 %-ով) նվազմամբ: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների 2010թ. 11 ամիսներին մսի իրացումը (կենդանի քաշով) կազմել է 101.3 հազ. տոննա, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 95.8%-ն է, իսկ կաթի արտադրությունը՝ 578.5 հազ. տոննա, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 96.4%-ն է: Ընթացիկ տարվա 11 ամիսներին ձվի արտադրությունը կազմել է 700.0 մլն հատ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ծավալները 16.3 %-ով:

4. 2010թ. գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 283.2 հազ. հա նախորդ տարվա 300.0 հազ. հա-ի դիմաց: Հատկապես պակասել

է բոստանային մշակաբույսերի՝ 29.0 %, կարտոֆիլի՝ 11.6 %, հացահատիկային մշակաբույսերի՝ 7.1 % ցանքատարածությունները: 1.7 %-ով ավելացել է կերային մշակաբույսերի տարածքները: Ընդհանուր առմամբ լուրջ հիմնախնդիր է մնում վարելահողերի օգտագործման ցածր մակարդակը: Այս ցուցանիշը 2010 թվականին ևս նվազման միտում է դրսևորել և կազմել շուրջ 63 %: Այսինքն, ՀՀ կառավարության կողմից հաստատված հողային հաշվեկշռով 449,4 հազ. հա վարելահողերից ավելի քան 166.2 հազ. հա չի ցանվել: Դրանից, ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների մոտ 109 հազ. հա օգտագործվել է որպես խոտհարք, մնացած վարելահողերը չեն օգտագործվում՝ հողակտորների կտրվածության և համայնքներից մեծ հեռավորության, վտանգավոր սահմանամերձ և ականապատված գոտում գտնվելու, գյուղացիական տնտեսությունների միջոցների սղության և այլ պատճառներով:

#### **ԻՐԱՎԱ-ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

5. Ագրարային ոլորտի տարբեր բնագավառները կարգավորող իրավա-օրենսդրական դաշտի համալրման և կատարելագործման նպատակով ընդունվել է նախարարության կողմից մշակված 1 օրենք և թվով 28 ՀՀ կառավարության որոշումներ: Բացի այդ մշակվել են 3 ՀՀ օրենքի և 10 ՀՀ կառավարության որոշման նախագծեր, որոնք գտնվում են քննարկման փուլում:

6. Ընթացիկ տարում ընդունվել է ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունը, որը կանխորոշում է առաջիկա տասնամյակում ագրարային ոլորտի առջև ծառայած խնդիրները, զարգացման գերակայություններն ու հիմնական ուղղությունները:

#### **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

##### **Բուսաբուծություն**

7. 2010թ. մշակվել է <<ՀՀ-ում 2010-2014թթ. ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիրը>>, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2010թ. հուլիսի 29-ի N 971-Ն որոշմամբ: ՀՀ կառավարության 2010թ. հուլիսի 8-ի N 933-Ն որոշմամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարությանն է հատկացվել 558.0 մլն դրամ՝ արտերկրից և տեղական սերմարտադրողներից էլիտային վերարտադրության աշնանացան ցորենի սերմացու գնելու նպատակով: Նշված գումարով ՌԴ-ի <<Սեմենա Ստավրոպոլյա>> ՍՊԸ-ից գնվել է 1010.1 տոննա, իսկ տեղական սերմարտադրողներից 117.45 տոննա աշնանացան ցորենի էլիտային վերարտադ-

րության սերմացու: Գնված սերմացուներից 9 տոննան նախատեսվել է սորտափոր-  
ձարկման նպատակով, որն իրականացվում է ՀՀ Սյունիքի, Շիրակի, Լոռու, Արագա-  
ծոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի և Արարատի մարզերի 14 տնտեսություններում:  
1001.15 տոննան բաշխվել է 114 շահառուներին և 4 գիտական կենտրոններին: 114  
շահառուների մեջ ընդգրկված է նաև ԼՂՀ-ն, որին հատկացվել է 50 տոննա սերմացու:  
Տեղական սերմարտադրողներից գնված 117.45 տոննա սերմացուն հատկացվել է 31  
շահառուների:

8. Շարունակվել է «Հայաստանի Հանրապետությունում 2007-2011 թթ. ցորենի  
և գարու սերմնաբուծության զարգացման» ծրագիրը: Արտադրվել է 1183 տոննա  
բարձր վերարտադրության սերմ, որից`

- աշնանացան ցորենի` 101 տոննա սուպերէլիտա և 798 տոննա էլիտա,
- գարնանացան ցորենի` 8 տոննա սուպերէլիտա և 33 տոննա էլիտա,
- գարնանացան գարու` 30 տոննա սուպերէլիտա և 207 տոննա էլիտա,
- աշնանացան գարու` 6 տոննա էլիտա:

9. Ընթացիկ տարում 141.5 հազ. հա հողատարածության վրա պայքարի աշխա-  
տանքներ իրականացնելու նպատակով ձեռք է բերվել 17450 կգ ցինկի ֆոսֆիդ  
տեսակի մկնասպան թունանյութ (61.3 մլն դրամ), որից 375 կգ օգտագործվել է 3000 հա  
հողատարածքներում տրակտորային ցրիչներով կենտրոնացված պայքար իրա-  
կանացնելու համար: Համայնքներին անհատույց բաշխվել է 16993 կգ ցինկի ֆոսֆիդ:  
Համայնքների միջոցով պայքար է իրականացվել 135.9 հազ. հա հողատարածքների  
վրա:

10. «Թամարա Ֆրութ» ՓԲԸ-ի կողմից օրգանիկ այգիների ստեղծման ծրագրի  
շրջանակներում կնքվել են պայմանագրեր 11 քաղաքացիների հետ և հիմնվել է 38 հա  
հատապտղի օրգանական այգի, նախատեսված 60 հա-ի դիմաց:

### **Անասնապահություն**

11. Ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության օպերատիվ տվյալների  
2010թ. վերջի դրությամբ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմում է  
572.8 հազ. գլուխ, այդ թվում կովերինը` 275.0 հազ. գլուխ, որը գերազանցում է նա-  
խորդ տարվա նույն ժամանակահատվածի գլխաքանակը 0.4 %-ով: Ոչխարների և  
այծերի գլխաքանակը ըստ օպերատիվ տվյալների կգերազանցի տարեսկզբի  
մակարդակը 9.0 հազ. գլխով և կկազմի 520.0 հազ. գլուխ: Խոզերի գլխաքանակը

կկազմի 95.0 հազ. գլուխ, որը տարեկան գլխաքանակից պակաս է 15.6 %-ով: Դա հիմնականում պայմանավորված է հանրապետությունում վերաբռնված աֆրիկյան ժանտախտ հիվանդությամբ:

12. 2010 թվականին Գերմանիայի Դաշնությունից ներկրվել է 262 գլուխ Շվից, Հոլշտինյան և Կարմրաբդետ ցեղերի տոհմային երինջներ, որը տարածամկետ վճարման պայմանով հատկացվել է հանրապետության առաջատար տնտեսություններին: Նախորդ տարիներին Հայաստանի Հանրապետություն ներկրված 1122 գլուխ Հոլշտին, Սիմենթալ և Շվից ցեղերի երինջներից արդեն ստացվել են բարձր տոհմային և մթերատու հատկանիշներով օժտված բարձրարժեք տոհմային հորթեր, դրանք հիմնականում օգտագործվել է հոտի վերարտադրության նապատակով, իսկ ավելի քան 100 գլուխը վաճառվել է հանրապետության գյուղացիական տնտեսություններին:

13. 2010 թվականին 160 հազար գլուխ կենդանի ոչխարներ արտահանվել է Իրանի Իսլամական Հանրապետություն, որը 10 %-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Վերջինս կարևոր նախադրյալ է հանրապետությունում ոչխարաբուծության հետագա զարգացման համար:

#### **Անասնաբուծություն և սննդի անվտանգություն**

14. 2010թ. կենդանիների հակաանասնաճարակային կամխարզելիչ միջոցառումների տարեկան առաջադրանքը կատարվել է 99.8%-ով (թերակատարումը պայմանավորված է խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության պատճառով խոզերի գլխաքանակի անկումներով և հարկադիր ոչնչացմամբ):

15. 2010թ. խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդությունը արձանագրվել է հանրապետության անտառային գոտիներում ՀՀ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերում, այնուհետև հիվանդության հատուկենտ դրսևորումներ եղել են նաև Երևանում և հարակից մարզերում: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ վարակի տարածումը սահմանափակված է, ներկայիս իրավիճակը հսկելի է և հիվանդության նոր բռնկումներ չեն արձանագրվել: Հիվանդության ընթացքը կրում է տեղաճարակային բնույթ:

16. Մսամթերքի անվտանգության ապահովման բնագավառում պետական վերահսկողության շրջանակներում 2010 թ. ընթացքում ստուգվել է 203 տնտեսվարող սուբյեկտ, որոնց նկատմամբ նշանակվել է վարչական տուգանք՝ շուրջ 23.4 մլն դրամի չափով:

17. 2010թ. ընթացքում նախարարության համապատասխան տեսչության հսկողության ներքո կատարվել են շուրջ 150 տոննա տարբեր տեսակի վտանգավոր ճանաչված (պիտանելիության ժամկետները անցած) սննդամթերքի ոչնչացման աշխատանքներ:

### **Բուսասանիտարիա**

18. Վերահսկողություն է իրականացվել սահմանային հսկիչ կետերով հանրապետություն ներմուծվող, հանրապետությունից արտահանվող, վերաարտահանվող և տարանցիկ փոխադրվող բույսերի, բուսական արտադրանքի, կարգավորվող առարկաների և փայտանյութի արտահանման նկատմամբ:

19. Հաշվետու ժամանակաշրջանում ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվել է բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների ներմուծման թույլտվություններ (97 հատ), բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի ներմուծման թույլտվություններ (134 հատ):

20. Սահմանային հսկիչ կետերում բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների ներմուծման, արտահանման և վերաարտահանման նպատակով ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվել 12885 հատ բուսասանիտարական հավաստագիր (այդ թվում՝ ներմուծման - 7925, արտահանման - 4932, վերաարտահանման- 28) :

21. Կատարվել է շուրջ 1343 ուսումնասիրություն ագրարային կանոնների պահպանության՝ հողի մշակության, պարարտանյութերի օգտագործման, մոլախոտերի դեմ պայքարի, սերմանյութերի, ցանքանյութերի և տնկանյութերի արտադրության, ներմուծման և իրացման, դրանց ցանքային պիտանիության և որակի ստուգման, բույսերի կարանտին և կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմների դեմ տարվող պայքարի, բույսերի պաշտպանության միջոցների, հանքային պարարտանյութերի փոխադրման, պահպանման, իրացման և ոչնչացման ուղղությամբ:

22. Ստուգումներ են անցկացվել բույսերի պաշտպանության միջոցների առևտրային կետերում: Արդյունքում Արմավիրի մարզում հայտնաբերվել է երեք ոչ լիցենզավորված բույսերի պաշտպանության միջոցների առևտրային կետ, որոնց հետագա գործունեությունը սահմանված կարգով կասեցվել է:

23. Իրացվող տարբեր տեսակի բույսերի պաշտպանության միջոցների որակի ստուգման նպատակով վաճառքի կետերից վերցվել է 600 նմուշառում և կատարվել լաբորատոր ստուգում:

24. Հաշվետու ժամանակաշրջանում հանրապետություն է ներմուծվել 579.5 տոննա տարբեր տեսակի բույսերի պաշտպանության միջոցներ:

#### **Գյուղատնտեսական հումքի մթերում**

25. Պտղի, բանջարեղենի և խաղողի սպասվող բերքի և մթերումների մոնիթորինգի արդյունքների հիման վրա նախարարության կողմից նախապատրաստական աշխատանքներ է իրականացվել գյուղատնտեսական հումքի մթերումները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ :

26. Առանց դժվարությունների հաջողվել է մթերել շուրջ 168.3 հազար տոննա պտուղ, բանջարեղեն և խաղող (շուրջ 18.9 մլրդ դրամի), այդ թվում` 33.3 հազար տոննա պտուղբանջարեղեն (շուրջ 2.1 մլրդ. դրամի) և 135.0 հազար տոննա խաղող (շուրջ 16.8 մլրդ. դրամի) : Մթերված խաղողի 1կգ-ի միջին գինը կազմել է 124.4 դրամ, նախորդ տարվա 115.4-ի դիմաց, լուլիկինը` 35.1 դրամ, նախորդ տարվա 34.5-ի դիմաց:

27. Թարմ պտուղբանջարեղենի առաջարկը զգալիորեն զիջել է ներքին շուկայի պահանջարկին, որի պատճառով դիտարկվեց այդ գյուղատնտեսական մթերքների գների աննախադեպ բարձրացում : Գների բարձրացմանը նպաստում է նաև արտադրողից մինչև սպառող շղթայում մի քանի միջնորդ վերավաճառողների առկայությունը:

#### **Արտադրատեխնիկական սպասարկումներ**

28. Սահմանված կարգով նախապատրաստվել է և ճապոնական կողմին է հանձնվել 2011 թվականի դրամաշնորհային ծրագիրը շարունակելու դիմում-հայտը:

29. Կազմակերպվել են ճապոնիայի կառավարության 170 մլն իեն ծավալով դրամաշնորհի հաշվին ներկրված 61 միավոր տրակտորի, գյուղգործիքների և պահեստամասերի ստացման, մաքսային ձևակերպման և պահառության հետ կապված աշխատանքները:

**Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում**

30. Այս ծրագրով իրականացվել են Հրագրան գետի հունի մաքրման և հողաթմբերի ամրացման, ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակի հեղեղատարների հունների մաքրման և ավերի ամրացման, ՀՀ Կոտայքի մարզի Կապուտան համայնքի հեղեղատարների հունների մաքրման և ավերի ամրացման, Մեղրաձոր համայնքի տարածքում Մարմարիկ գետի ավապաշտպան հենապատերի ամրացման, ՀՀ Վայոց Ձորի մարզի Ելփին համայնքի ոռոգման ջրավազանի վերանորոգման աշխատանքները :

31. Արաքս գետի վրա Երվանդաշատ և Ջանֆիդա համայնքներում համապատասխանաբար իրականացվել են 152.2 և 154.9 մլն դրամի վթարված հատվածների ավապաշտպան արգելաթմբերի վերականգնում:

### **Գիտություն**

32. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության համակարգում գործող 7 գիտական կազմակերպությունները 2010 թվականին կատարել են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող 30 պայմանագրային թեմա և 7 բազային ծրագիր:

33. Պետական սորտափորձարկման է հանձնվել (2008-2010թթ.) ընդհանուր թվով 34 սորտանմուշներ, որոնցից 12-ը շրջանացվել են:

34. Ուսումնասիրվել է տարբեր պարարտանյութերի՝ «Ցեոկարբոֆոս»-ի, «Բիոպլանտի»-ի, «Ազոցեովիտ-1»-ի, ազդեցությունը բանջարային մշակաբույսերի արդյունավետության վրա:

35. Գիտական կենտրոններում հաշվետու ժամանակահատվածում արտադրվել է 93,4 կգ էլիտային, 27,6 կգ սուպերէլիտային և 2,8 կգ I-վերարտադրության՝ ընդհանուր թվով 123,8 կգ բանջարաբոստանային մշակաբույսերի, 1,5 տ առվույտի սերմեր: Արտադրվել նաև է 656 հազար հատ սաճիլ, որից՝ 346-ը իրացվել է, իսկ 310-ը օգտագործվել գիտական կենտրոնի ցանքատարածությունների համար:

36 Գիտական կենտրոններում արտադրվել է 210,7 տոննա աշնանացան ցորեն, 320,9 տոննա բանջարեղեն, 1137,8 տոննա առվույտ:

### **Խորհրդատվություն**

37. Համակարգում գործում են 10 գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններ (ԳԱՄԿ-եր) և Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնը (ԳԱՀԿ):

38. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող «Գյուղական խորհրդատվական ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2010 թ. ԳԱՀԿ/ԳԱՄԿ-երի կողմից 916 համայնքներում անցկացվել է 2476 սեմինար, որոնց մասնակցել է 48114 մարդ, անցկացվել է 78 ցուցադրություն, եթեր է հեռարձակվել 120 հեռուստահաղորդում, տպագրվել է 4861 խորհրդատվական թերթիկ և գրքույկ, թողարկվել է 159 համար թերթ:

39. Տեղեկատվության և առաջավոր փորձի տարածման նպատակով ԳԱՀԿ-ի կողմից տպագրվել է 26 անվանումով շուրջ 14100 տպաքանակով խորհրդատվական թերթիկներ, որոնք ԳԱՄԿ-երի միջոցով բաժանվել են ֆերմերային տնտեսություններին: 2010թ. հրատարակվել է 33 համար «Ագրոլրատու» թերթը՝ 45850 տպաքանակով, 12 համար «Ագրոգիտություն» ամսագիրը՝ 2310 տպաքանակով: Հեռարձակվել է 64 հեռուստահաղորդում «Կենտրոն» և «Համասփյուռ» հեռուստաալիքներով:

40. ԳԱՀԿ-ի և ԳԱՄԿ-երի կողմից իրականացվում է «Գյուղատնտեսության մեջ «ԱԶՈՑԵՈՎԻՏ-1» և «ԱԶՈՏՈՎԻՏ-1» կենսապարարտանյութերի ներդրման պիլոտային ծրագրի խորհրդատվական և ցուցադրական փորձարկումների մասը: ՀՀ կառավարության 21.10.2010թ. N41 արձանագրությամբ հաստատվել է «Կենսապարարտանյութերի շուկայի զարգացման մասին» որոշումը, որի իրականացման ուղղությամբ նույնպես նախարարության գիտական և խորհրդատվական համակարգի կողմից տարվում են համապատասխան աշխատանքներ:

### **Կրթություն**

41. ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում գործում են 10 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ՝ քոլեջներ: Վեց քոլեջներում իրականացվում է նաև նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն: Քոլեջները կադրեր են պատրաստում միջին մասնագիտական կրթության 19 և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 3 մասնագիտությունների գծով:

42. 2010թ. քոլեջներ են ընդունվել 784 դիմորդ, որից միջին մասնագիտական կրթությամբ 704 (անվճար ուսուցմամբ 280 և վճարովի ուսուցմամբ 424) և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությամբ 80 դիմորդ:



43. Ներկայումս քոլեջներում սովորում է ընդամենը 2878 ուսանող, որից միջին մասնագիտական կրթությամբ՝ 2629 ուսանող և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությամբ՝ 249 ուսանող:

44. 2010թ. աշխատանքներ են տարվել Հայաստանի պետական ագրարային համալսարանի առկա ուսուցման 8 և հեռակա ուսուցման 26 մասնագիտությունների գծով նպատակային ընդունելության կազմակերպման ուղղությամբ:

#### **Անտառային տնտեսություն**

45. 2010թ. իրականացվել է 150 հա անտառմշակույթների հիմնադրում, ինչպես նաև նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացում՝ 329.5 հա և նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների խնամք՝ 2178 հա: Հիմնադրվել է 5.3 հա տնկարան:

46. 2010թ. ընթացքում ապօրինի ծառահատումները կազմել են 2310 հատ, անտառախախտման արձանագրությունները՝ 128 հատ, որից 100 ուղարկվել են մարզային բնապահպանական պետական տեսչություններ, իսկ 28 արձանագրություն՝ ոստիկանության տարածքային բաժիններ:

47. Ընթացիկ տարում տեղի է ունեցել հրդեհների 34 դեպք՝ 419.8 հա տարածքի վրա: Հրդեհների մարման աշխատանքները իրականացվել են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան մասնաճյուղերի աշխատակիցների հետ համատեղ:

#### **Միջազգային համագործակցություն**

48. Միջազգային կազմակերպություններին անդամակցության շրջանակներում շարունակվել է համագործակցությունը ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO), Կողեքս Ալիմենտարիուսի հանձնաժողովի, Համաշխարհային Բանկի (WB), Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի (IFAD), OPEC Միջազգային զարգացման հիմնադրամի, Կենդանիների առողջության միջազգային կազմակերպության (OIE) և ԱՊՀ Ագրոպարենային հարցերով միջկառավարական խորհրդի հետ, որի արդյունքում մշակվել և գործնականորեն իրականացվել են տնտեսության ագրարային հատվածի զարգացմանը նպաստող ծրագրեր:

49. 2010 թվականի մայիսի 10-14-ը Երևանում կայացել են ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության գյուղատնտեսության եվրոպական հանձ-

նաժողովի 36-րդ նստաշրջանը և ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության եվրոպական տարածաշրջանային 27-րդ համաժողովը: Միջոցառումներին մասնակցել են եվրոպական երկրների գյուղատնտեսության նախարարներ, փոխնախարարներ, այլ պաշտոնատար անձինք, ինչպես նաև միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

**Գյուղատնտեսության նախարարության համակարգում գործող վարկային ծրագրեր**

50. <<Շուկայավարման հնարավորություններ ֆերմերներին>> ծրագրի կողմից հանրապետության ծրագրային տարածքի 25 համայնքներում սկսվել են իրականացվել ենթակառուցվածքների վերականգնման նոր ծրագրեր 891.6 մլն դրամ ընդհանուր արժեքով (USAID ներդրումը այդ թվում` շուրջ 234.0 մլն դրամ): 3 համայնքներում իրականացվում են գետերի և հեղեղատարների հունի մաքրում և վերականգնում, 9 համայնքներում` գազաֆիկացման աշխատանքներ, 12 համայնքում` ջրամատակարարման աշխատանքներ, իսկ 1 համայնքում` միջհամայնքային ավտոճանապարհի վերանորոգում և ասֆալտապատում:

Փաստացի 2010 թվականի ընթացքում կատարվել են 286.0 մլն դրամի աշխատանքներ:

51. Ծրագրի կողմից նշված ժամանակահատվածում 31 համայնքներում շարունակվել են նաև նախօրոք սկսված տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնման աշխատանքների իրականացումը` 15 համայնքներում` ոռոգման ու խմելու ջրի ջրամատակարարման ցանցերի կապիտալ նորոգումներ և վերականգնում, իսկ 16 համայնքներում` գազաֆիկացում:

Փաստացի 2010 թվականի ընթացքում կատարվել են 1357.1 մլն դրամի աշխատանքներ:

52. Ընդամենը Ծրագրով ենթակառուցվածքների վերականգնման ուղղությամբ 2010 թվականի ընթացքում կատարվել են 1643.1 մլն դրամի աշխատանքներ:

53. Գյուղական տարածքներում ներդրումների հիմնադրամի (ՖԸԵԴԱ) միջոցով 2010 թվականին ընթացքում հաստատվել է 280.0 մլն դրամի երկու բաժնետիրական ներդրում` թռչնաբուծության և պահածոների արտադրության ոլորտում:

54. Ծրագրի վարկային միջոցներից նախատրակավորում անցած բանկերի միջոցով 2010 թվականի ընթացքում տրամադրվել է 2 639.2 հազ. ԱՄՆ դոլարի

կարճաժամկետ և երկարաժամկետ 102 հատ վարկ՝ գյուղական փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման համար: Վարկերը տրամադրվել են հիմնականում 12-13 տոկոսով, 3-7 տարի ժամկետով:

55. <<**Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության**>> **ծրագրի** կողմից համայնքներին տրամադրվող դրամաշնորհների միջոցով կատարվել են՝ ՀՀ Լոռու մարզի Այրում համայնքի գազաֆիկացման, ՀՀ Տավուշի մարզի Թովուզ համայնքի խմելաջրի բարելավման, ՀՀ Գեղարքունիքի մարզի Լուսակունք համայնքի ոռոգման ջրագծի կառուցման և Ակունք համայնքի խմելաջրի բարելավման աշխատանքները:

56. <<**Թռչնագրիպի հակազդման**>> **ծրագրով** ավարտին են հասցվել Մեղրիի սննդամթերքի անվտանգության, անասնաբուժական և բույսերի կարանտինի սահմանային հսկիչ կետի կառուցման և Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոնի շենքի կառուցման աշխատանքները: